

ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԷՄԻ ԹԵՆԻ «ՀԱՃՈՒՅՔ-ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԱԿՈՒՄԲԸ» ՎԵՊՈՒՄ

Սույն հոդվածում քննության է առնվում բարդ կառույց և սյուժետային գիծ ունեցող մի սպեղծագործություն, որտեղ միահյուսված են հիշողությունը և էթնիկ ինքնության մերժումը, որտեղ կա սեր և արելություն, պահպանողականություն և դրանից ձերբազատում, որտեղ կա զգացմունք և հարաբերություն, բայց և այնպես առկա է հավերժական շարունակելիության գաղափար՝ համեմված ենթագիտակցությունից դուրս պրծած տեսիլքներով: Հոդվածում կարևորվում են հենց այդ տեսիլքները, քանի որ դրանք ստիպում են էմի Թենին և նրա հերոսուհիներին վերադառնալ իրենց ինքնության ակունքներին: Սպեղծագործությունը առավել ընկալելի դարձնելու համար այն բաժանվում է ավագ սերնդի, այսինքն՝ մայրերի և երիտասարդ սերնդի՝ դուստրերի պատմությունների:

Բանալի բառեր. «Հաճույք-երջանկություն ակումբը», էթնիկ ինքնություն, մայր-դուստր հարաբերություններ, ավագ սերունդ, կրտսեր սերունդ, հիշողություն

Յուրաքանչյուր էթնիկ խմբի մշակութային առանձնահատուկ տարրերը ի հայտ են գալիս արվեստի, գրականության և ժամանցի բնագավառներում: Ասիա-ամերիկյան գրողները, արվեստագետները և ժամանց ապահովողները բարգավաճել են տարիների ընթացքում, քանի որ արտահայտել են իրենց ինքնությունը, ստեղծագործական միտքը, տաղանդը և իրենց համայնքի փորձը: Նրանց ստեղծագործությունը ներկայացնում է փոխհարաբերություններ, բարդություններ և հակասություններ, որոնք կազմում են Ասիական Ամերիկան:

Վերջին տարիներին ասիա-ամերիկյան շատ արձակագիրներ արժանացել են ուշադրության և ճանաչում են ստացել իրենց ստեղծագործությունների շնորհիվ: Նրանք իրենց գործերում ներառում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ԱՄՆ-ում մեծանալու առանձնահատկությունները, իրենց ծննդավայրից ԱՄՆ գաղթելը և այնտեղի կյանքին ադապտացվելը, սերը և ամուսնությունը, սիրելիների, ընկերների և ընտանիքի հետ հարաբերությունները: Ասիա-ամերիկյան գրողների հազվագյուտ նորարարությունն այն է, որ նրանք ներգրավում են իրենց համայնքի փորձը, իրենց հարցերը և ինքնությունը սեփական գործերում: Սա նրանց տալիս է ապրելու յուրահատուկ հեռանկար, բացահայտում է մեզ համար, թե ինչ է ասիա-ամերիկացի լինելը:

Մասնավորապես, ասիա-ամերիկյան բազմաթիվ գրողների համար դժվարություն կամ նույնիսկ հակասություն կարող է առաջանալ ընթերցողների լայն շրջանակի համար գրելիս, մի խնդիր, որը կընդգրկի ոչ ասիացիներին՝ միևնույն ժամանակ պատկերելով ասիա-ամերիկյան փորձը: Փաստորեն, ասիա-ամերիկյան շատ գրողներ իրար հետ վիճում են, թե արդյոք մի գործ կամ գրող բացառիկ հաջողության է հասնում կամ արդարացվում է՝ ասիացիների հանդեպ նվաստացուցիչ նախապաշարմունք առաջացնելով, առաջ քաշելով կարծրատիպեր՝ ոչ ասիացիներին դուր գալու համար կամ ամբողջովին սխալ ներկայացնելով Ասիական Ամերիկան: Այնուամենայնիվ, անպայման չէ, որ հարցը սա լինի: Ասիա-ամերիկյան գրողների ստեղծած գրականության վերջին պայթյունը ցույց է տալիս թեմաների և հարցերի առատություն, որ պետք է ներկայացնել և բավականին ստեղծագործական ձիրք և տաղանդ ձեռք բերել ասիա-ամերիկյան հասարակության մեջ, որպեսզի նպատակն իրականացվի: Նորից, երբ հասկանում ենք քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային տարբերությունները ասիա-ամերիկյան գրողների միջև, պետք է նաև հասկանանք, որ ասիա-ամերիկյան ոչ մի ընդհանուր փորձ չկա: Ավելի շուտ, հավաքական և հազվադուր հիշողությունները կազմում են գլուխկոտրուկ, որը նրանց միացնում է, այլ ոչ թե բաժանում:

Էմի Թենի բացառիկ հոչակը ժանրի հաջողության վառ ապացույցն է: Ասիա-ամերիկյան գրականությունն ներառում է մշակույթների տարբեր շարքեր՝ չինական և ճապոնական մշակույթից մինչև հնդկական, կորեական և ֆիլիպինյան:

Ասիա-ամերիկացի գրող Էմի Թենը սկիզբ դրեց ԱՄՆ-ում իր էթնիկ խմբի գրական ճանաչմանը, և շատ տաղանդավոր գրողներ հաջողություն են գտնում այնտեղ: Թենի առաջին գիրքը՝ «Հաճույք-Երջանկություն ակումբը», վաճառվեց չորս միլիոն օրինակով, իսկ ամենավերջին գիրքը՝ «Հարյուր գաղտնի զգացումները», վերջերս է լույս տեսել: Բացատրություն չկա ասիա-ամերիկյան գրողների հանկարծակի հաջողության կամ էլ այս ճյուղի առանձնացման համար: Շատերը հույսով են, որ վերջիվերջո իրենց կվերաբերվեն որպես տաղանդավոր հեղինակների, այլ ոչ թե էթնիկ փոքրամասնության պիտակ կրողների: Էմի Թենը չի համարում իրեն միայն չինա-ամերիկացիների մասին գրող, չնայած իր հերոսները չինացիներ են կամ չինական ծագումով ամերիկացիներ: Նա ասում է, որ իր գրքերը առաջին հերթին ընտանեկան հարաբերությունների մասին են:

Սկզբնական շրջանում Էմի Թենը պլանավորել է գրել «Հաճույք-Երջանկություն ակումբը»՝ որպես կարճ պատմվածքներ, սակայն հետագայում նրանք միացել են և դարձել մեկ վեպ: Պատմվածքը իր մեջ զուգակցում է և՛ կենսագրություն, և՛ ինքնակենսագրություն, հիշողություններ, պատմություններ, ժողովրդական հեքիաթներ:

Քննադատները նշում են, որ բավական գրականություն կա, ուր մենք տեսնում ենք մայրերի և դուստրերի պայքարը ինքնության համար, սակայն միայն Էմի Թենի մոտ, նշում է Մարիա Հենզը, կարելի է տեսնել՝ ինչպես է մայրերի դերը գերակայում: Քննադատները նույնպես նշում են Թենի յուրահատուկ գրական ոճը՝ նկատի ունենալով վեպի տասնվեց պատմությունների կապակցվածությունը և դասակարգումը: Շատ քննադատներ նշում են, չնայած որ վեպի հերոսները չինա-ամերիկացիներ են, նրանց խնդիրները, պայքարը մեծ արձագանք են գտել բոլոր մարդկանց հոգիներում, նամանավանդ այն կանայք, որոնք ծնվել են Ամերիկայում: Քննարկելով վեպը տարբեր տեսանկյուններից՝ քննադատները եկել են այն եզրահանգման, որ գիրքը ներկայացնում է ոչ միայն մայրերի և դուստրերի պայքարը, այլև տարբեր մշակույթների պայքար: Քննադատները ասում էին, որ գիրքը հետազոտում է այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր են Ամերիկայի բոլոր ներգաղթյալների համար: Չնայած նրան, որ շատ քննադատներ վեպի մեջ տեսնում են միայն Չինաստանի և չինական մշակույթի առանձնահատկությունները, շատերը հասկանում են, որ վեպը անդրադառնում է բազմաթիվ համընդհանուր խնդիրների և թեմաների, որոնք հոգեհարազատ են մեզ բոլորիս՝ անկախ տարիքից, սեռից և ազգությունից:

«Հաճույք-Երջանկություն ակումբը» Էմի Թենի ամենահայտնի գրքերից մեկն է: Պատմության հիմքում չորս ընտանիքներ են, որոնք գաղթել են Չինաստանից Ամերիկա, և որոնք հիմք են դնում հետագայում շատ հայտնի դարձած «Հաճույք-Երջանկություն ակումբ»-ին: Այդ ակումբում խաղում էին Չինաստանում շատ հայտնի մահճոնգ խաղը: Խաղում էին հիմնականում փող կամ ուտելիք շահելու հույսով: Գիրքը ինքը կարծես մահճոնգ խաղը լինի. կազմված է չորս մասից, իսկ ամեն մասն էլ իր հերթին՝ չորս բաժնից, այսպիսով ստեղծվում է տասնվեց գլուխ: Երեք մայր (մայրերից մեկը մահանում է մինչև այս պատմությունը) և իրենց չորս զավակները կպատմեն իրենց կյանքի պատմությունները: Ամեն մասը սկսվում է խաղի հետ կապված մի պատմությամբ:

Էմի Թենի «Հաճույք-Երջանկություն ակումբ»-վեպում չորս ընտանիքների՝ Վուերի, Ջոնգերի, Հուսանորի և Սեն-Քլեյրների մեջ ներկայացված են մայր և դուստր հարաբերությունները: Բոլոր մայրերը առաջին սերնդի գաղթյալներ են Չինաստանից, շատ վատ են խոսում անգլերեն և մնում են օտարերկրացի իրենց նոր աշխարհում: Աղջիկները բոլորը մեծացել և կրթվել են Ամերիկայում, ոմանք անգամ ամուսնացել օտարերկրացիների հետ: Ընտանիքը միակ կառույցն է, որը մայրերին հնարավորություն է տալիս ապահովելու էթնիկ հաջորդականությունը, հիշելու և պատմելու անցյալի հետ կապված պատմությունները: Տառապելով Լենայի ծախողված ամուսնության պատճառով, Լենայի և չինական մտածելակերպի անհամատեղելիությունից՝ Յինգ-Յինգ Սեն-Քլեյրը անհանգստանում է, ինչպես և բոլոր մայրերը. «Ամբողջ կյանքի ընթացքում ես նրան հետևում էի կարծես այլ ափից: Եվ հիմա ես պետք է պատմեմ նրան ամեն ինչ իմ

անցյալի մասին: Դա միակ հնարավորությունն է մտնելու նրա մաշկի մեջ և ստիպելու նրան կանգնել ճիշտ ուղու վրա» /Amy Tan, 1991: 153/:

Իր մոր աչքերում չունենալով անցյալի մասին հիշողություններ անցյալի մասին՝ Լենան չի կարողանում հասկանալ, թե ինքը ով է և չի կարողանում գտնել իր տեղն ու դերը այս կյանքում: Միգուցե մոր հիշողություններով նա կկարողանա հավատ ծեռք բերել որոշակի կանոնների, դերերի, պահվածքի և արժեքների նկատմամբ, որոնք ապահովում են ընտանիքը և չինական հասարակությունը:

Էմի Թենի վեպում հիմնական թեմաներից մեկն է կերպարանափոխումը, թե ինչպես են մայրերն ուզում, որպեսզի իրենց դուստրերը չնմանվեն իրենց, չունենան դաժան կյանք: Այդ ամենի հետ մեկտեղ նրանք ցանկանում են, որ իրենց դուստրերը պահպանեն էթնիկ ինքնությունը և չմոռանան իրենց արմատների մասին: Պատմվածքի հերոսուհին մի ծեր կին է, որը ցանկանում է իր աղջկան մեծացնել Ամերիկայում և հասցնել մեծ ապագայի: Նա երազում է, որ աղջիկը լավ ընտանիք կազմի, արժեք ունենա իր և ամուսնու համար: Տիկինը ցանկանում է, որ իր դուստրը խոսի մաքուր ամերիկյան անգլերենով, աշխատանքում հասնի հաջողությունների: Դառնալով հաջողակ՝ նա չպետք է մոռանա Չինաստանի հետ կապված հիշողությունները: Իր էթնիկ ինքնությունը չմոռանալու համար ծեր տիկինը շուկայից մի երկարավիզ բադ է գնում՝ նմանեցնելով կարապի, և ցանկանում է նվիրել աղջկան՝ հույս ունենալով, որ երկարավիզ բադը միշտ կհիշեցնի աղջկան իր հայրենի Շանհայը: Էմիգրացիայի ճանապարհին կորցնելով բադին՝ տիկինը աղջկա համար կարողանում է պահել միայն կարապի մեկ փետուր:

Թենը այս պատմության միջոցով կարողանում է ներկայացնել Ամերիկան. այն հաջողությունների, հնարավորությունների և երջանկությունների երկիր է: Եվ այդ երկրում տիկնոջ երազանքը կիսով չափ իրականություն է դառնում: Աղջիկը հասնում է այն բանին, որ հարգանք է վայելում շրջապատում և խոսում ամերիկյան անգլերենով: Միայն այստեղ կանայք սկսում են չհասկանալ միմյանց: Եվ ծեր կինը մահանում է ամերիկյան իրականության մեջ՝ չկարողանալով հակադրվել իր հիշողություններին, ինչպես նաև աղջկա մեջ չզարգացնելով էթնիկ ինքնությունը: Արմատները թույլ չեն տալիս, որ տիկինը հարմարվի նոր միջավայրին:

Այս մասի առաջին պատմության մեջ չինուհի Սույուանը, հաստատվելով Ամերիկայում, իր երեք ընկերուհիների հետ հիմնում է «Հաճույք-Երջանկություն ակումբը», որտեղ միշտ վառ են մնում Չինաստանից բերված հիշողությունները և էթնիկ նկարագիրը: Սույուանը, չհասցնելով արտահայտել իր մտքերն ու երազանքները՝ կապված ակումբի հետ, ինչպես նաև չհասցնելով իրականացնել Չինաստանի հետ կապված իր բոլոր երազանքները, մահանում է: Հոր խնդրանքով Ջինգ-Մեյը ակումբում զբաղեցնում է մոր տեղը: Մոր ընկերուհիները պատմում են նրան իր մոր հիշողությունների մասին, որոնց դուստրը տեղյակ չէր: Չինացի երեք կանայք

խնդրում են Զինգ-Մեյին իրականություն դարձնել մոր վաղեմի երազանքը: Տարիներ շարունակ Սույուանին տանջում էր հոգու ցավը, հիշողությունները. դրանք կապված էին պատերազմի հետ, հիշողությունները, որոնք տարիներ շարունակ հանգիստ չէին տալիս իրեն, հիշողություններն ու երազանքները, որ այդպես էլ ի կատար չաձվեցին: Պատերազմի ժամանակ մայրը կորցրել էր զույգ աղջիկներին և նրանց գտնելու երազանքը սրտում՝ մահացել: Զինգ-Մեյը որոշում է ի կատար ածել մոր երազանքը և հանգիստ տալ նրա հոգուն: Այս պատմության մեջ Թենը փոքրիշատե բացահայտում է նաև այն փաստը, որ հաճախ մայրերի և դուստրերի միջև առաջանում են հակասություններ, և խոսքը էթնիկ ինքնության և ժառանգականության մասին է: Մայրերը միշտ ցանկանում են, որ աղջիկները, ժամանակակից լինելով հանդերձ, պահեն իրենց էթնիկ ինքնությունը. հագնեն չինական հագուստ, որ կրում էին մայրերը ակումբում: Սակայն աղջիկները միշտ ամաչում էին այդ տարօրինակ հագուստից, որ կրծքի վրա ասեղնագործված մետաքսե ծաղիկներ ուներ, մեջքին պինդ կապած գոտի և պինդ, ձիգ կանգնած օձիքներ: Սկզբնական շրջանում նա ամաչում է «Հաճույք-Երջանկություն ակումբ»-ից՝ այն ամոթալի չինական սովորույթ համարելով, մինչև այն պահը, երբ ակումբից նվեր է ստանում 1200 դոլլար: Այդ պահից սկսած՝ նա իր առաջին քայլն է անում դեպի իր արևելյան ժառանգության հասկացողությունն ու ըմբռնումը:

Երկրորդ պատմության մեջ Էմի Թենը անդրադարձ է կատարում մահջոնգ խաղի հարավային անկյունում նստող Էն-Մեյի կյանքին, որը շատ ծանր և դաժան մանկություն էր ունեցել: Նա մեծացել էր առանց մոր և հոր, տատի՝ Պոպոյի խնամքի տակ: Պոպոն սեփական դստերը դուրս էր վռնդել տնից, քանի որ վերջինս դարձել էր մի հարուստ ընտանիքի տղայի սիրուհին: Մի չինացի կնոջ համար, որի կյանքում բարոյականությունը դրված է առաջին գծի վրա, շատ անպատվաբեր էր տեսնել, որ սեփական դուստրը ինչ-որ մեկի սիրուհին է: Էթնիկ, ավանդապաշտ հայացքներով այդ կինը թռռանը գրկել էր մորը տեսնելու հաճույքից: Պոպոն ամեն կերպ աշխատում էր Էն-Մեյի հիշողությունների մեջ մորը պատկերել չար և անբարո կերպարանքով: Չնայած այդ բոլոր հիշողություններին, երբ Էն-Մեյը հանդիպում է մոր հետ, բոլորովին այլ տպավորություն է ստանում նրանից: Մայրը նրա վրա բավականին նուրբ, խելացի, զգայուն կնոջ տպավորություն է թողնում, և աղջկա կյանքի ընթացքում մայրը միշտ հայտնվում էր հիշողությունների մեջ՝ լողացող կերպարանքով, չար ու անբարո, ինչպես ներկայացրել էր տատը, նուրբ և կանացի, ինչպես նրան տեսնում էր Էն-Մեյը:

Արդյոք ճիշտ է դատել ինչ-որ մեկի մասին՝ ելնելով իր սեռից: Ավանդական չինական գրականության մեջ շատ հաճախ հանդիպում ենք դեպքերի, երբ մարդու մասին կարծիք են կազմում՝ ելնելով նրա սեռական պատկանելությունից: Կանայք համարվում են ցածր էակներ: Նրանք կանգնած էին հասարակական շատ ցածր դիրքում: Չինական մշակույթում

գերիշխող դեր է խաղում արական սեռը: Տղամարդուց սպասումները աշխատանքի բնագավառում ավելի շատ էին, իսկ կինը մի անձայն էակ էր, որը պետք է մնար տանը: Նրանք հասկանում էին, որ իրենց մասին ոչ մեկը հոգ չի տանում, և դա ավելի ծանր է դարձնում ապագայի հանդեպ լավատեսությունը: Էմի Թենի «Հաճույք-Երջանկություն ակումբը» վեպում Էն-Մեյ Հսուն, Լինդո Ջոնզը և Յինգ-Յինգ Սեն-Քլեյրը մեծացել են ավանդական Չինաստանում, որտեղ գոյություն ունի սեռական խտրականություն: Նրանք առնչվում են լուրջ խնդիրների, որոնք կործանում են իրենց կյանքը: Միայն անցնելով դժվարին ճանապարհ և հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ կանայք կարողանում են վերադառնալ նորմալ կյանքի:

Էն-Մեյը, Լինդոն և Յինգ-Յինգը ստորացվում են տղամարդկանց կողմից կին լինելու և չինական ավանդույթների պատճառով: Էն-Մեյը ճնշվում է տարբեր պարագաներում: Նրա մորը հրավիրել էին ժամանակ անցկացնելու մի հարուստ առևտրականի՝ Վու Յինգի տանը: Գիշերը այդ մարդը մտնում է և բռնաբարում Էն-Մեյի մորը: Դա նույնպես ցուցանիշն է այն բանի, որ Չինաստանում կնոջ հանդեպ հարգանք չկա: Էն-Մեյի մայրը, այդ դեպքից հետո ստիպված էր ապրել այդ մարդու հետ, քանի որ կին լինելով՝ չէր կարող պայքարել իր իրավունքների համար: Նա դարձավ այդ տղամարդու երրորդ կինը: Լինելով երրորդ կին՝ նա գրեթե ոչ մի իրավունք չուներ ամուսնու տանը: Էն-Մեյի ընտանիքը չընդունեց նրա մորը այդ դեպքից հետո, քանի որ նա խայտառակեց իր ընտանիքը: «Երբ ես երիտասարդ աղջիկ էի Չինաստանում իմ տատիկը ասում էր, որ իմ մայրը ուրվական է» /Amy Tan, 1991: 180/: Էն-Մեյին ստիպել էին, որ նա մոռանա իր մորը և ապրի իր կյանքով: Անհեթեթ էր այն փաստը, որ Էն-Մեյին ասել էին մոռանալ մորը, քանի որ նա դարձել էր անկառավարելի: Կնոջ ինքնագնահատականի պակասը առաջացնում է ամոթի զգացում Մեյի ընտանիքում: Քանի որ Չինաստանում ընդունված է եղել բռնաբարությունը և բազմակնությունը, հենց այդ պատճառով Վու Յինգի արարքը դիտվում է ճիշտ կամ նորմալ, իսկ Էն-Մեյի մոր արարքը՝ սխալ և ոչ ընդունելի:

Լինդո Ջոնգի պատմությունը փոխաբերական իմաստով ցույց է տալիս կանխակալ վերաբերմունքը կանանց հանդեպ: Տասներկու տարեկան հասակում Լինդոն նշանվում է Թյանյուի հետ: Սա օրինակ է կանանց արհամարհանքի: Ոչ մեկը չի ցանկանում ունենալ նախօրոք որոշված ամուսնություն: Ամուսնությունը սրբություն է, և այն պետք է լինի երկու մարդկանց փոխադարձ սիրո հիման վրա: Դա առաջին հերթին անարդար է Լինդոյի հանդեպ: Սա ցույց է տալիս, թե ինչպես են չինական ավանդույթները և իրականությունը ցավ պատճառում կանանց: «Ես՝ Լինդոս, մեկ անգամ զոհաբերել եմ իմ կյանքը՝ ծնողներիս տված խոստումը չդրժելու համար» /Amy Tan, 1991: 193/: Այստեղ Լինդոն նկատի ունի իր նախօրոք պլանավորված և անհաջող ամուսնությունը: Չինական ավանդույթներին հետևելը Լինդոյին թույլ չի տալիս դառնալու ինքնուրույն և ապրելու իր սեփական կյանքով: Նա անկարող է իր սեփական

որոշումները կայացնել: Լինդոն պատրաստակամ է զոհաբերել իր կյանքը հանուն ծնողների պատվի: Ուրիշին դժբախտացնելով՝ պատիվ ձեռք չես բերում:

Յինգ-Յինգ Սեն-Քլեյրի կյանքը ցույց է տալիս հարգանքի պակասությունը կնոջ հանդեպ: Իր մորաքրոջ ամուսնությունից հետո տասնվեց տարեկանում նա մասնակցում է խնջույքներին: Այնտեղ մի տղամարդ դանակով կտրում է ձմերուկը, որը խորհրդանշում է կուսության կորուստը: Այն տղամարդը, որը կնոջ հետ վարվում է նույն կերպ, շատ դաժան է: Այս ամենը խորապես հուզում է Յինգ-Յինգին, բայց իր ուժը օգնում է իրեն հաղթահարելու այդ ցավը: Հետագայում նա ամուսնանում է այդ մարդու հետ: Նա գնում է հյուսիս՝ բիզնես ճանապարհորդության: Յինգ-Յինգը իմանում է, որ ամուսինը ուզում է լքել իրեն օպերային երգչուհու պատճառով: «Ես՝ Յինգ-Յինգս, մտածել եմ նետվել լիճը, ինչպես անում են շատ կանայք՝ դրդված ամոթի զգացումից: Ես կպատմեմ նրան՝ Լենային, այն երեխայի մասին, որին սպանել եմ, որովհետև ես սկսեցի շատ ատել այդ մարդուն» /Amy Tan, 2002: 222/: Սա ցույց է տալիս, թե ինչքան վատ է վարվել այդ տղամարդը Յինգ-Յինգի զգացմունքների հետ: Նա խոստացել է սիրել Յինգ-Յինգին, սակայն նրան լքելով՝ ցույց է տվել իր անհարգալից վերաբերմունքը: Յինգ-Յինգը անկարող էր երբևէ իսկապես սիրել: Լենան նույնպես տառապում էր անհաջող ամուսնությունից: Նա ամբողջովին ենթարկվում էր ամուսնուն, և դա նրան շատ էր բարկացնում:

Պատմությունները խոսում են այն իրադարձությունների մասին, որոնք ձևավորում են մայրերի և աղջիկների անհատականություն: Յուրաքանչյուր պատմություն հիմնված է կնոջ կյանքի ստեղծման կամ ինքնակործանման վրա, երբ նրա անհատականությունը հավերժ մնում է անփոփոխ: Մայրերը կասկածի տակ չեն դնում իրենց համոզմունքները՝ ելնելով հիմնադիր մշակույթից, ինչով էլ միացել են իրար այդ ընտանիքները: Սակայն իրենց աղջիկները շփոթված էին իրենց անհատականությունից:

Էմի Թենը, իր վեպում էթնիկ ինքնությունը քննարկելու ժամանակ օգտագործելով «հիշողություն» եզրույթը, առաջին հերթին նկատի է ունենում հիշողության կառուցվածքի պատմողական նախադրյալը, և երկրորդ՝ շեշտ է դրվում դրա հանրային-հոգեբանական մեխանիզմների վրա:

«Հաճույք-Երջանկություն ակումբը» վեպում թեմաներից մի քանիսն են՝ մայր-դուստր հարաբերությունները, ընտանեկան սպասումները, երազանքները և մշակույթների անհամատեղելիությունը: Այս երեք թեմաներից ամենազվխավորը մայր-դուստր հարաբերություններն են: Էմի Թենի այս ստեղծագործության մեջ մայրերը փորձում են դուստրերին դաս տալ, բայց դուստրերը չեն հասկանում: Վեպի հերոսուհի Ջինգ-Մեյը և նրա մայրը՝ Սույուան Վուն, լավ հարաբերություններ չունեին: Ջինգ-Մեյը անգամ լավ չէր էլ ճանաչում իր մորը: «Ի՞նչ կարող եմ պատմել նրանց իմ մոր մասին: Ես ոչինչ չգիտեմ: Նա իմ մայրն էր» /www.pinkmwnkey.com.amy tan/:

Այս մեջբերումից կարելի է ականհայտորեն տեսնել և հասկանալ, թե ինչքան խճճված են մայր-դուստր հարաբերություններ:

«Հաճույք-Երջանկություն ակումբը» վեպի նպատակն է ցույց տալ, որ այժմ ավագ սերունդների ավանդույթները դուրս են մղվում կրտսեր սերունդների կյանքից: Երեխաները կորցրել են իրենց ժառանգության մի մասը այն երկրի պատճառով, որտեղ նրանք մեծացել են, ինչպես նաև տարբեր մշակույթների ազդեցության պատճառով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Tan A. The joy luck club. New York, 1989.
2. Tan A. Mother with a past. Maclean's, 1991.
3. [www.pinkmwnkey.com.amy tan/](http://www.pinkmwnkey.com.amytan/)
4. www.sparknotes.com

Յ. ТАМАЗЯН – Этническая принадлежность в романе «Клуб радости и удачи» Эми Тэн. – В данной статье рассматривается роман со сложной структурой и сюжетной линией, где переплетаются воспоминание и отрицание этнической принадлежности, любовь и ненависть, традиционные ценности и отказ от них, где мы видим чувства и отношения, но, что важнее всего, нам наглядно демонстрируется идея вечного возвращения, перевоплощенная в подсознательные видения. Именно эти видения проходят через все произведение: сам автор и ее персонажи посредством этих видений возвращаются к своим этническим корням и переосмысливают свою этническую идентичность. Автор романа представляет читателю очень интересную технику повествования. В романе параллельно повествуются две истории: одна представляется старшим поколением, а другая – младшим.

Ключевые слова: «Клуб радости и удачи», отношения дочери-матери, этническая принадлежность, старшее поколение, младшее поколение, воспоминание

Н. ТАМАЗЯН – Ethnic Identity in Amy Tan's Novel "The Joy Luck Club". – The present paper is an attempt to discuss a novel with rather a complicated structure and story line where the rejection of ethnic identity and memory are perfectly blended. The hatred of conventionality and liberation from it is an opportunity to get eternal recurrence combined with subconscious visions. These visions are of special interests to us as they encourage Amy Tan and her characters to return to their identity roots. The plot of the novel is divided into parallel narratives; that is a story of an elder generation and of a younger one. These are the tools used by the author to encourage the reader to analyze the basic issues offered in the novel.

Key words: "The Joy Luck Club", ethnic identity, mother-daughter relations, an elder generation, a younger generation, memory